ՆՈՐ-ԴԱՐ

№ 111 ՏԱՄՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հաբաթ 24 Յունիսի 1895 Հաբաթ 24 Յունիսի ՏԱՄՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 111

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ պրուում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը: Յայտարարութիւնները ընդունւում են ամեն վրուններով Յայտարարութիւնների գառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ

Երիցս՝ Դշխոյ ՄԿՐՏՉԵԱՆ ԱՂԱՋԱՆԵԱՆՑ, ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԵԱՆ ՉՈՒԱՆԵԱՆՑ, ՍԱՐԳԻՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՋԱՆԵԱՆՑ և ԳՐԻԳՈՐ ՉՈՒԱՆԵԱՆՑԸ՝ յաւօք սրտի յայտնում են իրենց ազգականներին և ծանօթներին՝ առաջիններն իրենց Թանկագին մօր և վերջիններն զոքանչ՝

ՏԻՐՈՒՀԻ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ

մահը: Հանգուցեալի յուղարկաւորութեան հանդէսը կը կատարուի կիրակի յունիսի 25-ին, առաւօտեան 10 ժամին իւր սեպհական տնից (Վանքի փոքր փողոց №5) դէպի Վանքի աւագ եկեղեցին:
Ամբիծքը կը կատարուի չորեքշաբթի երեկոյեան 7 ժամին:
(667) 1—1

Յուլիսի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը «Նոր-Դար»-ին բաժանորդ գրուողը պէտք է ուղարկէ 6 րուբլի: Ռուսիայից դուրս բաժանորդ գրուողները պէտք է վճարեն 6 ամսուայ համար 25 ֆրանկ:

Ռուղարձայից բաժանորդ գրուողները յունական թղթատարի շուղարկեն, որ անպէտք է, թող ուղարկեն աւստրիական գուլէն (թղթատար):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Իրաւունքի և պարտաւորութեան սահմանները:
Հայոց գործերը:
Բերնհարդտ Շաերն և Թրքահայոց արտօնութիւնները. (վերջ):
Վեհ. Հայրապետը Մոսկուայում:
Քրոնիկոն.—Վեհ. Հայրապետի վերադարձը Մոսկուայից: Օրապահներ Վեհափառի մօտ: Ներսիսեան գպրոցի տնօրէն ընտր.: Բաղ. կանոնադր. Թանձակում թազդի այգինների և գինեգործութեան վիճակը: Կովկ. հանք. ջրերը: Ս. Լուսաւորիչ եկեղեցին: Ներս. գպրոցն աւարտողներ: Աղէտի զոհեր: Մի ներկայացում: Կոյրերի խնամ. հոդաբարձութեան կողմից: Երեւանից: Մաղկաձորից: Ալէքսանդրապոլից: Մակքինեան վաճառանոցը: Աղատաֆայից: Բագուից:
Նամակ խմբագրութեան:
Թղթակցութիւններ.— Նամակ Թիւրքիայից Կ. Պոլիս:
Քաղաքական.—Քաղաքական լուրեր:
Հեռագրեր:
Տեղեկատուներ:
Յայտարարութիւններ

ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Բոստոնի մեր թղթակիցը գրում է մեզ, որ «Boston Herald» թերթի մէջ հրատարակուած են Թիւրքիայում բնակուող մի ամերիկացի միսիոնարի երկար և մանրամասն նամակները Բիթլիսի բանտի մասին: Նա մանրամասն կերպով նկարագրում է այն չարչարանքները, որ կրել են այդ բանտի մէջ հայ բանտարկեալներն և ընդհանրի մի առմի առաջ է բերում վերջիններիս անուտնական ցանկն ու նրանց կրած տանջանքների եղանակները:

Իւր նամակների մէջ ամերիկացի միսիոնարն, ի միջի այլոց, ասում է.

«Աչքարհիս ամենից վառող խնդիրներից է հայոց խնդիրը. մարդասիրական խնդիր չէ այն. նրա մահը կընչնակէ քրիստոնէութեան մահն Արեւելքում»:

—

«DailyNews»-ը, լսելով Անգլիայի ազատամիտ միսիոներութեան արտաքին քաղաքականութեան մէջ ունեցած աջողութիւնների (?) մասին, ասում է՝ դժուար թէ մարքիզ Սալսբիւրին իր պահպանողական մինիստրութեամբ աւելի եռանդով գործի հայոց օգտին, քան գործում էր Ռազբերիի մինիստրութիւնը Ռուսիայի հետ միասին: «Daily News»-ը հաւատացնում է, թէ մեր օրերի պատմութեան մէջ ոչ մի բանում դիպլոմատիան այնպիսի մեծ յաղթանակ չի տարել, ինչպէս այն, որ պետութիւնները միացան հայոց խնդրի օգտին:

—

Կ. Պոլսից, յունիսի 19-ից «Daily Telegraph»-ին հեռագրում են.

«Երկիւ սուլթանի պալատում կարևոր վճիռներ են կայացած հայոց խնդրի վերաբերմամբ: Յերեկով ամենքը նկատում էին, որ մեծ հաղորդակցութիւն կայ կայսերական պալատի և անգլիական դեսպանատան միջև: Մեծ վեզիրն ու մինիստրները մի քանի անգամ կանչուեցան սուլթանի պալատը: Երեկոյեան, ժամը 6-ին, նորից խորհուրդ գումարուեցաւ, որին ներկայ էին մեծ վեզիրը և բոլոր մինիստրները: Նոյն ժամին անգլիական դեսպան սըր Ֆիլիպ Կերրին իւր ատաղ թարգմանի հետ գնաց կայսերական քարտուղարի մօտ: Քարտուղարի գրասենեակում մեծ գործի վրայ էին: Սուլթանի առաջին քարտուղարն ոչոքի չէր ընդունում մինչև երեկոյ և չատ ժամերի ընթացքում անընդհատ աշխատում էր կամերհեր Արիֆ-բէյի հետ միասին: Վերջինս ըզբաղւում է, դլխաւորապէս, սուլթանի քաղաքական կարդադրութիւնները պաշտօնեաներին հաղորդելով»:

—

«Les Nouvelles d'Orient»-ը մի մեծ յօդուած է տալիս, որ իւր մէջ կարևոր մերկացումներ է պարունակում հայոց խնդրի վերաբերմամբ: Յօդուածի հեղինակն է Թրքական «Liste civile»-ի վարչութեան մի նախկին խորհրդական: Նա հաստատում է մեր Կ. Պոլսի Թղթակցի իւր ժամանակին հաղորդած այն տեղեկութիւնը, որ 1894 Թուի օգոստոսի 16 ից մինչև սեպտեմբերի 15-ը տեղ հայկական կոտորածները կատարուել են ուղղակի սուլթանի պալատից ղրկուած կարդադրութեամբ: Կոտորելու հրամանները տրուել են, ինչպէս յայտնի է, չորրորդ զօրաբանակի հրամանատար Զեքի-փաշային և Բիթլիսի նահանգապետ Թաքսիմ-փաշային: Բ. Դուռն իւր այդ վարմունքն արդարացնում էր նրանով, թէ ինքը ստիպուած է եղել ճնշելու հայոց ապստամբութիւնը. բայց Մուշի գաւառը, ուր տեղի են ունեցել կոտորածները, բոլորովին անմասնչելի է օտարերկրացիների համար, որոնք կարող լինէին ապստամբութիւն յարուցանել: Եթէ այդ ապստամբութիւնը, իրօք, եղել է, ապա նրան ճնշելու մասին անմիջապէս կը գիտենային Լոնդոնում: Մինչդեռ գաղտնութիւնների մասին տեղեկութիւնները Լոնդոն հասան միայն երկու ամսից յետոյ, Օգեսսայի վրայով, այն բանից յետոյ, երբ չարաբաղդ հայերը մի կերպ ձգտին իրենց ուժասպ սահմանները և պատմեցին իրենց վրայ գործ դրուած բռնութիւնների մասին:

—

Հետեւեալ ճիշտ տեղեկութիւններն են հաղորդում Բ. Դրան երկու յայտարերների (մեմորանդում) մասին: Առաջին յայտարերը թուրքերէն գրուած մի հասարակ պատասխան էր, որ ղրկուած էր պետութիւնների դեսպաններին ուղղակի սուլթանի պալատից և որի մասին Բ. Դրան մէջ պաշտօնապէս ոչինչ յայտնի չէր: Միմիայն պատահմամբ նոր մեծ վեզիրը ծանօթացաւ այդ պատասխանի բովանդակութեան հետ և ներկայացրեց նրան Բ. Դրանը: Դեսպաններն իրենց կողմից միևնոյն պատասխանը հաղորդեցին իրենց կառավարութիւններին և երկուշաբթի օրը, Հոփդալատից յետոյ, Լոնդոնում պէտք է այդ առթիւ մինիստրական խորհուրդ կայանար: Սակայն այն պատճառով, որ մեծ վեզիրը փոխուեց և նոր մեծ վեզիր Սայիդ փաշան խօսակցութիւն ունեցաւ սըր Ֆիլիպ Կերրիի հետ, այդ նիստը յետաձգուեցաւ մինչև որ Բ. Դուռը պաշտօնապէս պատասխան կրկաը, որպիսի պատասխան տալ նա խոստացել էր Յունիսի 15-ին սպասուող պաշտօնական պատասխանը ստացուեցաւ յունիսի 17-ին և դեսպաններին հաղորդուեցաւ իրրև բերանացի յայտարարութիւն. միևնոյն օրը ներկայացուեցան և Բ. Դրան կազմած բոլոր արձանագրութիւնները, որոնք գրուած էին ֆրանսերէն լեզուով: Պաշտօնական պատասխանի բովանդակութիւնը յայտնի է. պատասխանն էր, բայց դրանով էլ պահանջւում է, որ պահպանուի սուլթանի գերիշխանութիւնը, և նպատակ է կացուցանւում նոր բանակցութիւններ անելը, որոնց սակայն առիթ են տալիս և պատասխանի՝ բացատրութիւններ պահանջող մի քանի մութ կէտեր: Այդ էլ հաղորդուած է կառավարութիւններին, որոնցից դեսպաններն այժմ հրահանգների են սպասում:

—

ԲԵՐՆՀԱՐԴՏ ՇԱԵՐՆ ԵՒ ԹՐՔԱՀԱՅՈՑ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Վերջ *)

Կ. Պոլսի հայոց պատրիարքից յետոյ, «Դիտաւոր»-ը սահմանում է Երուսաղէմի պատրիարքի իրաւունքներն ու պարտաւորութիւնները:

Երուսաղէմի պատրիարքը քաղաքական տեսակէտից ստորադաս է Կ. Պոլսի պատրիարքից: Նրան նուիրուած են «Դիտաւոր»-ի 17,18,19,20,21,22 և 23-րդ յօդուածները: Այդ յօդուածների հիման վրայ, Երուսաղէմի պատրիարքը հանդիսանում է միայն սուրբ տեղերի վերատեսուչ և ս. Յակոբեանց վանքի վանահայր: Երուսաղէմի միաբանութիւնը իւր պատրիարքից դժգոհ լինելու դիպուածում բողոքում է Կ. Պոլսի ազգային ժողովին և եթէ հարկ է գտնում, խնդրում է, որ նրան փոխեն:

Երուսաղէմի պատրիարքին ընտրում է Կ. Պոլսի ազգային ժողովն այն եօթը հոգու միջից, որոնց ցուցակը կազմում է ս. Յակոբեանց միաբանութիւնը: Ընտրութիւնից յետոյ նոր պատրիարքն առաջարկւում է Բ. Դրան ի հաստատութիւն:

Երուսաղէմի նորընտիր պատրիարքը 35 տարեկանից պակաս չպիտի լինի և պէտք է լինի Թրքահպատակ:

«Դիտաւոր»-ի մէջ առանձին կարևորութիւն է տրուած Կ. Պոլսի կրօնական ժողովին: Այդ ժողովը բաղկացած է 14 անդամներից, որոնք ընտրում են բարձր հոգևորականներից և որոնց հաստատում է Թուրքաց կառավարութիւնը: Կրօնական ժողովի համար ընտրուած իւրաքանչիւր անդամ 30 տարեկանից պակաս չպէտք է լինի: Ընտրութիւնները կատարւում են երկու տարին մի անգամ ապրիլի վերջերին: Կրօնական ժողովի նախկին անդամները վերստին կարող են ընտրուել միայն իրենց պաշտօնը թողնելուց երկու տարի յետոյ:

Կրօնական ժողովը հանդիսանում է բարձրագոյն իշխանութիւն՝ Թրքահայոց կրօնական բոլոր գործերի վերաբերմամբ: Նա պարտաւոր է նոյնութեամբ պահպանել հայոց եկեղեցու բոլոր առանդութիւնները և հոգալ եկեղեցու պայծառութեան համար: Կրօնական ժողովն է վերահսկում և դպրոցներին, մանաւանդ կրօնագիտութեանը:

Կրօնական որ և է կարևոր խնդիր վճռելու համար նա ընդհանուր ժողով է հրաւիրում Կ. Պոլսում և նրա չրջակայքում գտնուած բոլոր եպիսկոպոսներից ու քարոզիչներից: Եթէ այդ ժողովը գտնէ, որ քննութեան առաջարկուած խնդիրը դուրս է իւր իրաւասութիւնից, այդ դէպքում դիմում է ս. Էջմիածնի կաթողիկոսին, որ ամենայն հայոց կաթողիկոսն է:

Կրօնական ժողովն է քահանաները նշանակում Կ. Պոլսի համար, որոնց հաստատում է պատրիարքը: Գաւառների համար քահանաներ նշանակում են տեղական կրօնական ժողովները: Քահանայի ապրուստը հոգում է համայնքը:

Քաղաքական ժողովը վարում է քաղաքական (քաղաքացիական) գործերը: Այդ ժողովը բաղկանում է 20 անդամից, որոնց ընտրում է ազգային ժողովը և հաստատում է Թուրքաց կառավարութիւնը: Քաղաքական ժողովի անդամները պէտք է հմուտ լինեն ոչ թէ միայն ազգային, այլ և Թրքական կայսրութեան օրէնքներին: Նրանց պաշտօնավարութեան ժամանակը 2 տարի է, և, կրօնական ժողովի անդամների նման, վերստին կարող են ընտրուել երկու տարի անցնելուց յետոյ միայն:

Քաղաքական ժողովի պարտքն է՝ նպաստել ժողովրդի առաջադիմութեանը, բարելաւել նրա քաղաքական դրութիւնը, քննել այն բոլոր ծրագիրները, որ կը ներկայացուեն նրան ժողովրդի չահերի նկատմամբ, և, ոչ ի պէտէ ընդդէմ, ձգտել իրագործելու այդ ծրագիրները, եթէ միայն դրանք օգուտ կարող են բերել ժողովրդին:

Քաղաքական ժողովը յայտնի Թուով յանձնաժողովներ է կազմում ժողովրդական կրթութեան, դատավարութեան, վանքերի համար և երեք յանձնաժողով վարչութեան համար:

Ժողովրդական կրթութեան յանձնաժողովը պէտք է բաղկացած լինի 7 կրթուած անձերից: Այդ յանձնաժողովի պարտաւորութիւնն է հսկել դպրոցների վրայ. նա պէտք է դրդէ ժողովրդին նոր դպրոցներ բանալու, պէտք է բարելաւէ ուսուցիչների դրութիւնը և ձրի դպրոցներին բաւարար չափով դասագրքեր տալ: Նոյն յանձնաժողովն է աւարտող սաներին ու սանուհիներին վկայականներ տալիս, մրցանակներ նշանակում և այլն:

Դատական յանձնաժողովին նախագահում է Կ. Պոլսի պատրիարքը: Այդ յանձնաժողովը բաղկանում է 8 անդամներից, չորսը՝ աշխարհական և չորսը՝ հոգևորական: Դրանք բոլորն էլ պէտք է ամուսնացած լինին և 40 տարեկանից պակաս չպիտի լինեն: Նրանք վճռում են դլխաւորապէս ընտանեկան գործեր: Դատուող կողմերից նա, որ դժգոհ է վճռից, բողոքում է կամ կրօնական, կամ քաղաքական ժողովին, նայելով, թէ ինչ բնաւորութիւն ունի գործը:

Երրորդ յանձնաժողովը կառավարում է ազգային կալուածքները, հիւանդանոցները և եկեղեցիների գոյքը:

«Դիտաւոր»-ի 90, 91, 92 և 93-րդ յօդուածները վերաբերում են «ազգային ատրպագրութեան»: Այդ յօդուածների հիման վրայ, ամեն ոք, որ հայ է և որին արհեստ ունի, պարտաւոր է իւր կարողութեան չափով մասնակից լինելու ժողովրդի կարիքների ծախքերին: Այդ նպատակով ատրպագրութիւն է բացւում ամեն տարի: Փողերը ժողովում են Կ. Պոլսում՝ կրօնական և քաղաքական ժողովները, դատաւներում՝ թեմական իշխանութիւնը: Հաւաքուած դրամների գործադրութեան մասին տեղեկութիւն է տրւում Բ. Դրան:

Վերջին 99-րդ յօդուածն ասում է.— Եթէ փորձը ցոյց տայ, որ այս արտօնութիւնների մի քանի յօդուածները պէտք է փոփոխութեան ենթարկուեն, այն ժամանակ դրա համար կրօնական և քաղաքական ժողովներից, նմանապէս և յանձնաժողովներից մի առանձին մասնաժողով պիտի կազմուի 20 անդամից բաղկացած և այդ մասնաժողովը պէտք է ուսումնասիրէ, առաջարկէ և մացնէ այնպիսի փոփոխութիւններ, որոնք այս օրէնքի հիմունքները խանգարելու բնաւորութիւն չունենան: Այդ մասնաժողովի վճիռները պէտք է վաւերացնէ ազգային ժողովը, որ այնուհետև պիտի յանձնէ Բ. Դրանը ներկայացնելու համար սուլթանին ի հաստատութիւն:

Սրանք են «Դիտաւոր»-ի մէջ հայերին չնորհուած արտօնութիւնները:

Ինչպէս տեսնում էք, նախկին մեծ ելարքոս Ալի փաշան չատ բարեհաճ կերպով է վերաբերուել դէպի սուլթանի հայ հպատակները, որ այսպիսի արտօնութիւնների օրէնք է խմբագրել նրանց համար: Այդ արտօնութիւններն աւելի ևս մեծ նշանակութիւն են ստանում մանաւանդ այն պատճառով, որ նման արտօնութիւններ, ինչպէս պ. Շաերն է նկատում, չեն չնորհուած Թրքահպատակ ոչ մի ազգի, բացի հայերից: Պ. Շաերն օրինակ է բերում նախկին Բիւզանդիոնի հարստատ պա-

*) Տես «Նոր-Դար» № 110.

ակներին—յոյներին, որոնք այժմեան Կ. Պոլսի մէջ մինչև անգամ պատրիարքական ընտրութեան գործում կախուած են Թուրքաց կառավարութեան քմահաճոյքից. այն ժամանակ երբ հայերն իրենց պատրիարքական գահի համար միայն մի ընտրելի են առաջարկում ի հատատուքիւն, նրանց հետ միասին ապրող յոյները սկզբ է հինգ ընտրելիներ առաջարկեն, որոնցից Բ. Դուռը կըհաստատի նրան, ում պատրիարքութիւնն իրեն աւելի ձեռնտու կըլինի։

Այդ բոլորը չատ լաւ. խօսք չունենք դրա դէմ։

Բայց հիմա մեզ յայտի միւս կողմը դարձնէք։

Հայաստանը Թուրքաց ձեռքն ընկնելուց յետոյ մինչև այս րոպէս ոմ ասելի է հալածւում Թիւրքիայում—հայը, թէ յոյնը։ Ո՛վ է Թիւրքիայում աւելի ճնշուած բարոյապէս, տնտեսապէս և ֆիզիքապէս—հայը, թէ յոյնը։ Վերջապէս, Սասունի դազանական բարբարոսութիւններին ենթարկուեց ոմ—հայը, թէ յոյնը...

Պ. Բերնհարդտ Շտերնը, եթէ գէթ մի րոպէ մոռանալու լինէր իւր հրէական-ցեղական յատկանիշը—արծաթասիրութիւնը, նա կըտեսնէր, որ ամենից առաջ հարկաւոր է այս հարցերին պատասխանել. նա կըտեսնէր, որ հայն իրաւունք ունի ահաբեկներ պահանջելու—մի բան, որի դէմ յարձակուելն իւր յօդուածին նպատակ է դրել «Berliner Tageblatt»-ի Կ. Պոլսի թղթակիցը։

Հրէան միայն լաւ փողապաչա կարող է լինել, բայց ոչ—մարդասէր...

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

—

(«Նոր-Դար»-ին Մոսկուայից)

—

Ընդարձակ հեռագրերից յայտնի են ձեզ ամենայն հայոց Վեհ. Կաթողիկոսի Մոսկուա ժամանելու մանրամասնութիւններն և այն փառաւոր ընդունելութիւնը, որ տեղիս հայ հասարակութիւնը ցոյց տուեց իւր հոգևոր Պետին։ Նոյնը կրկնել աւելորդ համարելով, կուզէի մի քանի ուրիշ մանրամասնութիւններ աւելացնել։

Հեռագիրը հաղորդեց ձեզ յունիսի 16-ին Վեհ. Հայրապետի այցելելը տեղիս պատկերների Տրեատակովսկայա կոչուած գալլերէյան, ուր հաւաքուած էր քաղաքային կանոնապրութիւնը մըցնել Դանձակում լիակատար կերպով, իսկ Շուրայում սիւրի մոցուի քաղ. կանոնադրութեան դիւրացրած ձևը։

—

Թիֆլիսումն է գտնւում երկրագործական մինիստրութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Մ. Կ. Բալլասը, որ ղրկուած է ուսումնասիրելու համար խաղողի այգինների և գինագործութեան վիճակը Կովկասում։

—

Ցայտնի է, որ ներկայումս բանակցութիւններ են լինում Կովկասի հանքային ջրերի չահագործութիւնը յանձնելու Վիշիի ֆրանսիական ընկերութեան։ «Նով.»-ն հաղորդում է, որ մասնակցութիւն կայ յիշեալ ջրերն այդ ընկերութեանը յանձնելու 50 տարի ժամանակով։ Պարչական-տնտեսական մասը սիւրի վարեն ֆրանսիական ընկերութեան ներկայացուցիչները, իսկ բուժչական մասը պէտք է գտնուի ռուսաց բժիշկների ձեռքին։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ս. Լուսաւորիչ եկեղեցին խարխուլ դրութեան մէջ լինելու պատճառով փակուած է։ Եկեղեցին վերանորոգելու մտադրութիւն ունի պ. Ս. Բաբանասեանը. միւս կողմից լուում է, որ նոյն սիւրի մատրութիւն ունի մի ուրիշ պարոն՝ Բարխուդարեան։ Յանկալի էր, որ այդ երկու պարոններից մէկն ու մէկը կամ երկուսը միասին չուտով իրագործէին իրենց լաւի մտադրութիւնը։

—

Ներսիսեան հոգևոր դպրոցի մանկավարժական ժողովը իւր յունիսի 9-ի նիստում որոշեց հետևեալ աշակերտներին տալ հաստատութեան վկայագրեր. Աղամիրզեան Սահակ, Դալաթեան Դաւիթ, Զաքարեան Սարգիս, Մինասեան Գէորգ, Յակոբջանեան Դաւիթ, Պալասեան Աղէքսանդր, Սիմէոնեան Շաւարշ, Վարդանեան Աղէքսանդր, Վարդանեան Վասակ, Փերիխանեան Գէորգ, Քոչարեան Սաղաթել՝ ինչպէս և ճեմարանից արձակուած աշակերտներին որոնք են—Ամատունի Հայկ, Աւագեան Նրսեսէզ, Բարսամեան Դաւսպար, Կարապետեան Յովհաննէս, Համամչեան Ներսէզ, Մակարեան Տիգրան, Մկրտչեան Գարեգին, Յովսէփեան Նիազ, Շահինեան Խաչատուր, Սողոմոնեան Մովսէս, Տէր-Գէորգեան Յակովբ, Տէր-Խաչատրեան Նիկոլայ, Տէր-Պօղոսեան Աչոտ, Տէր-Սիմէոնեան Արշաւիր։

—

Հետևեալ մարդկանց դիակները են հանուած յունիսի 21-ին քանդուած կաշիի գործարանների փլատակների տակից 1) Թիֆլիսի քաղաքացի Միխայէլեանցին, 2) նոր-բայազիտցի Աստուածատուր Վարդանեան Մանչեղեանի, 3) Թիֆլիսեցի Սարգիս Մարտիրոսեանի, 4) Թիֆլիսեցի Սմբատ Յարութիւնեանի, խիմիարանի։ Հետևեալ 6 հոգին հանուած են խեղանդամ եղած. 1) Թիֆլիսեցի Արտեմ Տէր-Ոսկանեան, 2) Թիֆլիսեցի Սիսակ Շերմազանեան Գէորգեանց, 3) սրա եղբայրը Գրիգոր Շուշանով, 4) Արշիլ Դոլաբէյ, 5) Թիֆլիսեցի Արշակ Միրզաբեկեան և 6) Վանի Նաթրիսչվիլի։

Բարեբաղդաբար այս աղէտն այնքան չատ զոհերի պատճառ չի եղել, ինչպէս կարծուում էր սկզբում։ Եւ այդ բանը պիտի վերագրել նրան, որ աղէտի ժամանակ գործարաններում եղել է մօտ 40—50 հոգի, որոնք առաջին ճայթիւնը լսելուն պէս սկսել են դուրս վազել. մինչդեռ սովորաբար այդտեղ բանում են աւելի քան 100 հոգի։

—

Թիֆլիսում այս օրերս հայ դերասանական խմբի անդամները մի ներկայացում են տալու մի Շամախեցի հայ հրիատասարդի, պ. Լևոն Եղիազարեանի, օգտին, որ ուսանում է Մոսկուայի ֆիզիտարմոնիքական երաժշտական դպրոցում։ Պ. Եղիազարեանը սրան չպէտք է չիմոթել երդիչ-բարիտոն Եղիազարեանի հետ), ինչպէս մեզ հաղորդում են, պրամատիքական տնոր է։ Ցոյս ունինք, որ մեր հասարակութիւնը կըսպատէ ներկայացման նիւթական աջողութեանը։

—

Մեզ խնդրում են հրատարակել հետևեալը։

«Կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի կոյրերի խնամատար հոգաբարձութեան Կովկասի բաժանմունքի խորհուրդը հրաւիրում է այն անձերին, որոնք ցանկանում են իրենց տները տալ մայիսի 15-ից, վարձու տալու ակնաբուժարանի համար, դիմել ակնաբուժարանի դիրեկտորին, դոկտոր Գ. Ա. Տարասաիձէին (Սիմոլովսկի պրոեզդ, տուն իշխանուհի Աբամէլիքովայի) և նրա հոգաբարձու՝ իշխան Ն. Վ. Արղութեան-Երկայնաբազուկին (Գոլովինսկի պրոսպեկտ, սեպհական տուն)։

—

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ԱՀՄԵԴ

ԲԼԴՈՒԻՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

(Դ. Լիսէնի)

Ա.

Սրանից երեսուն տարի առաջ Արաբիայի զարհուրելի Կարմիր անապատով անցաւ մի անվեհեր ու քաջասիրտ մարդ և եկաւ նրա ահմանում բնակուող բէդուինների մօտ, որոնց չափազանց զարմացրեց նրա այս յանդուգն ճանապարհորդութիւնը։

—Ո՛վ ես դու, քաջասիրտ անցորդ, —հարցրեց նորեկին ծերունի շէյխ Ջաբութան,—եօթը տասնեակ տարիներ ես ապրում եմ Կարմիր անապատի հզերքին, սակայն երբէք չեմ տեսել, որ մի ոք համարձակուէր ուղղիլ իւր ուղտի դլուխը դէպի այն կողմը... Երկնից պատդամ, թէ դժոխքի ծնունդ՝ Աբու-Նիրանի որդին ես դու... Ինչ ես կամենում անապատի խեղճ զաւակներից —Բէնի-Հազալի արաբներից։

—Նէ խարակ մուբարէկ—թող օրհնուի քո կեանքը, իմաստուն ծերուկ, իշխանդ Բէնի-Հազալ մեծանուն ցեղի։ Սրկնքի դեսպան չեմ ես և ոչ Աբու-Նիրանի որդին... Անարժան Իբն-Սաֆարն եմ, Բէնի-Աուազ ցեղի պատգամաւորը, Ալլահի ողորմութեամբ անցայ Դանայի Կարմիր անապատը՝ ողջունելու Բէնի-Հազալ ցեղի ծերերին... Թող Ալլահի օրհնութիւնը լինի նրանց, նրանց որդւոց և ուղտերի երամների վրայ։

—Մաշալլահ, ինչ տեղեկութիւններ ես բերել մեր եղբայրներից—աղնուատոհմ Բէնի-Աուազներից, — հարցրեց Իբն-Սաֆարին չէյխ Ջաբութան։

—Անբնին են Ալլահի տուած ճակատագիրը, Նրա օրհնեալ կամքն ու ցանկութիւնը... Այն օրից, երբ ստեղծուել է անապատն և նրա մէջ բնակութիւն են հաստատել մեր բարեյիշատակ պապերն ու հայրերը, Ալլահի օրհնութիւնն անպակաս էր այդ կոլմերի և Նէջդեի ու Նէֆուսի ժողովրդի վրայից... Լայնատարած և ազատ է անապատը—մեր ամենից թանկագին մայրը, ազատ կեանք էին վարում նրա մէջ վայրենիները *). հարիւրաւոր տարիներ միմիայն նրանք են չրջել այս նուիրական վայրերն իրենց ուղտերով ու ձիաններով. օտարի երիվար երբէք չէ կոխոտել Նէջդեի ւազդներն և Թրչնամու հայեացքն երբէք չէ դարձել դէպի Կարմիր անապատը. նա՝ որպէս մի մաքուր, անարատ կոյս, չդիտէր դաւաճանի, սրծր, սկօնկը... Ազատօրէն չրջում էր նրա մէջ անապատի որդին-բէդուինը։ Գերութիւնը, տարուկների և վհատների բաժին է միայն, իսկ ազատութիւնը—Ալլահի այս ամենաթանկագին պարգևը, երկինքն ուղարկել է միմիայն բէդուիններին... Իւր արեան դինն էր հատուցանում նա, ով կրվրտանար դիպչել բէդուինի անկախութեանը. մեր նախորդներն իրենց նիզակների ծայրերովն էին մահ սփռում Թչնամու բանակների մէջ, իսկ նրանց սպիտակ ոսկորները կլանում էր անապատը... Այդպիսի չատ ոսկորներ է տեսել Իբն-Սաֆարը Նէջդեի, Եմենի և Հադրմաուդի ւազդների մէջ,—և մենք դեռ չատ-չատերը կրթաղենք մեր անկուսում անապատի խորքերում։ Սառն, մաքուր առուակը հրապուրում է ճանապարհորդին անապատում, ընկած ուղտը հաւաքում է իւր չորքը գիչակեր անդղների բազմութիւն, ոսկոյն թէ ինչն է գրաւում մեր Թչնամուն դէպի անապատը, յայտնի չէ Իբն-Սաֆարին։ Վրանաբնակ բէդուիններն աղքատ են, -նրանք չունին ոսկի, արծաթ, մետաքս, թանկագին քարեր, այլ նրանք հարուստ են մի-միայն իրենց կրած բազմաթիւ զրկանքներով. համբերութեան զաւակներ, սովի և ծարաւի որդիք են խեղճ բէդուինները. նրանք ծնուել, մեծացել և ցանկանում են մնալ անապատի մէջ, և հենց մեր այս թանկագին մայր-անապատը Թչնամիները կամենում են խլել մեզանից ու իրենց ծառայեցնել... Թող անիծալ նրանց ցանկութիւնը, թող Ալլահի բարկութիւնը թափուի ամբարիշտների գլխին և մեր վրէժխնդրութեան արիւնն առատօրէն հոսէ խառասիրա Թչնամու երակներից... Անկախ բէդուինը երբէք չի ընկնիլ առելի «վաւի-ադուա» *) բռնանալութեան տակ, մենք պատրաստ ենք, թող նորից արիւն թափուի։ Բէնի-Աուազների ծերերն անարժանին ուղարկել են յայտնելու Բէնի-Հազալի ժողովրդին, որ անիծուած օսմանցին դարձեալ գալիս է ծռլի կողմից մեր անապատը նուաճելու և կապանքներ դնելու նրա ազնուատոհմ որդւոց վրայ... Ինչալլահ...

Լուեց Բէնի-Աուազների պատգամաւորը. չէյխ Ջաբութան ցած թողեց իւր ալիսառն մօրուսը ի նշան յարգանաց դէպի իւր հարևան ցեղի պատգամաւորը,—և նրանք երկար ժամանակ լուռ նստած էին, մինչև իմաստուն և փորձուած չէյխն ընդմիջեց լռութիւնը՝ պատասխանելով.

—Մաշալլահ,—այդ է Աստուծոյ կամեցածը, — Բէնի-Հազալները Բէնի-Աուազների հետ կըլիմեն Թչնամու գնդերի առաջ... Այս րոպէիս խորհրդի կըհրաւիրեմ մեր ցեղի մարդկանցը և քաջասիրտ Իբն-Սաֆարը կըլսէ, թէ ինչ պատասխան կըտայ ծերունի չէյխը իւր ժողովրդի կողմից։

Տահիկների՝ վրանաբնակ բէդուինների այդ զարաւոր և անհաչտ Թչնամիների նոր արչաւանքի մասին հասած լուրը ամենեին չզարմացրեց Ներքին Արաբիայի հեռաւոր անկիւններում բնակուող ցեղերին։ XI-րդ դարից ըսկսած սելջուկները, որ ահագին տէրութիւն հիմնեցին արաբական խալիֆատի հռչակաւոր բեկորների վրայ և իրենց սուլթանին տուղդափառների աջողութեան պատուաւոր տիտղոսը տուին, փորձեցին նաք մտնել արաբական թերակղզու խորքերը և միացնել այն որ կրնային իրենց տէրութեան հետ։ Նրանց այս տևական բազմաթիւ փորձերը, որոնք բէդուիններին յիչեցնում էին նրանց ոսմկական լեգէոնների արչաւանքը Յուլիոս Կաղիացու առաջնորդութեամբ, նոյնպէս ապարդիւն մնացին և օսմանցիների հզօր ոյժերը փչացան ոչ այնքան արաբացիների զէնքից, որքան անհիւրընկալ անապատների անառիկ լինելուց։ Տահիկներից անհամեմատ բազդաւոր էին Մահմէդ-Ալիի ժամանակ հզիպատացիները, որոնք յաղթանակով հասան մինչև Արաբիայի միջնավայրերը

*) Այդպէս է անուանում իրեն մաքուր ծագումով հպարտացող բէդուինը։

*) Անապատի անկախ որդիքն այսպէս անուանում են քաղաքների բնակիչներին։

ՊԱՐՍԿԱՀԱՅԱՍՏԱՆ. — Ծատրո Ալհամբրա Մադրիդում ներկայացրել է Ռոսսինիի «Սևիլիայի սափրիչը» օպերան։ Ներկայացումը շատ հաջող է անցել։ Ներկաների մեջ եղել են Ալֆոնս XII թագավորը, թագուհի Մարիա Քրիստինան, թագավորական ընտանիքի մյուս անդամները, նախարարները, դիվանագիտական կորպուսը և այլն։ Ներկայացումից հետո թագավորական ընտանիքը ներկայացել է Ալհամբրայի թատրոնի դերասանների ներկայացմանը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. — Ինչպես հայտնի է, Պարսկաստանի գահաժառանգ Մուզաֆար էդ-Դին շահը 18-ին, ցերեկույթ տալով Նասր էդ-Դին շահի ի պատիվ, ներկայացրել է նրան Ամերիկայի միսիոներ Լաֆլինին, որը Պարսկաստանում 40 տարի է ապրում և մեծ ծառայություններ է մատուցել պարսից ժողովրդին։ Լաֆլինը ներկայացրել է շահին իր գրած գրքերը, որոնցից մեկը պարսկերեն է թարգմանված։ Շահը շնորհակալություն է հայտնել Լաֆլինին և խոստացել է գրքերը կարդալ։

ՀՆԴԿԱՍՏԱՆ. — Ծանր ջերմությունից մահացել է Ջոդհպուրի մահարաջան։ Նրա տեղը բռնել է նրա 8 տարեկան որդին։

ՀՆԴԿԱՍՏԱՆ. — Վիկտորիա թագուհին հրամայել է Ինդոսի վերջին վարչապետ Դուֆերինին նշանակել Կանադայի գեներալ-նահանգապետ։

ՀՆԴԿԱՍՏԱՆ. — Ինչպես հայտնի է, Ռուսաստանի ներկայացուցիչ Ռոբերտսը Ինդոսում ստիպված է եղել հրաժարական տալ, որովհետև Ռուսաստանի հետ հարաբերությունները լարվել են։ Ռոբերտսի հրաժարականը ընդունվել է

բարեհաճեր վայելեցին, քաղցր օշարակն ու մրուրապատ սուրճը խմեցին,—եթէ դեռ չընդհատենք այս բանի վրայ աջին ու ձախին բաշխած կլորիկ ոսկիները,—որոնք ամենքն էլ ապարդիւն անցան, բարեյաջող մի ծանր հարուած էլ վրայից տալով։

Մենք խորհուրդ կուտայինք ս. Ալէքսէեանին, որ՝ երբ բանն այդ տեղը հասնի, հետեւելով պատգամաւորների օրինակին, միւս կողմից էլ ինքը բողոքէ նոյն դատական դործերի մինիստրութեան և արանից ու նրանից պահանջէ այս բանի վրայ արած իւր ծախքերը՝— ճաշի, ընթրիքի, մուրաբայի, օշարակի, սուրճի և այլն, բացի պատուոյ կուրսուից, որից սոխրուած պէտք է լինի ձեռքերը լուալու։

Եւ կարծենք թէ սոյն տաբօրինակ դատը վարել տանձնող բարեկամ փաստաբաններ կրգտնուին։

***

Խրիմում հրատարակուող ռուս-թուրքերէն «Թարջիման» թերթի խմբագիր-հրատարակչին՝ Իսմայիլ Գասպարինսկուն անչուշտ ճանչցած էք։

Ահա, այս պարոնը կամ՝ թրքական տոգորուած բառով՝ Իսմայիլ բէյ Գասպարինսկին գտնում է Կ. Պոլսում և ապահով ենք, թէ նրա այս երկրորդ, թէ երրորդ այցելութիւնը թրքական մայրաքաղաքին ուրիշ բանի համար չէ, եթէ ոչ սուլթանից նոր չքանչան կորզելու և նոր պաշարով Խրիմ վերադառնալու։

Ախար ինչու չխաբել, երբ կարելի է խաբել...

Սրանք՝ լինի «Թարջիման»-ի խմբագիրը կամ ուրիշը, կեղծ գաղափարի վաճառականներ են, որոնց վարմունքն աւելի դատապարտելի է, քան Թրքա-Հայաստանի քրդերի, չերքէզների ու բաշիբոզուկների վարմունքը...

Փառք Մուսա-բէյին...

Բայց ափսոս, որ սրանցով մամուլի համբաւն է արատաւորւում։

Հարկաւ XX-րդ դարում Թիֆլիսում... մասնագէտ պ. «Monsieur Calantar»-ի նախագահութեամբ կայանալի մամուլի համաշխարհային կոնգրեսում դարուս մամուլի ներկայացուցիչներից մէկ անհատի խայտառակ վարմունքն ի նկատի կառնուի։

***

Թալմազոյն մի դէպք։ Քիչ մնաց, որ պէտք է մոռանայի։ Աւելի դա յարմար է դալիս նիւթի չատութիւնից, չնայելով որ նոր եկած թղթակիցներ կրգտնուին, որ այս վարկեանիս ամեն ինչ կըտան, թղթակցութեան համար դէթ մի չնչին նիւթ ձեռք բերելու։

Հայ լրտեսների ու մատնիչների թիւը քիչ էր, դրանց թուի վրայ վերջերս աւելացել էր նաև մի Պօղոս անունով դերձակ։ Ահա սրա մասնութեամբ ամսոյս 15-ին բանտարկուում են երկու կատարելապէս անմեղ երիտասարդներ։ Նոյն օրը երեկոյեան պահուն երկու ոստիկանների մէջտեղ բանտարկեալներին տանելիս են լինում դէպի կեդրոնական բանտը, երբ Գալաթիայում հանդիպում են ձերբակալուածների ընկերները։ Վերջիններս առաջարկում են ոստիկաններին, որ ձերբակալուածներին արձակեն *)։ Ոստիկանները երկու ոսկի կաշառ են ուզում... Սակարկութիւնը փոխւում է խուլ վիճաբանութեան, և ոստիկանը հայերին ֆէոտոր է կոչում։

Այդ ժամանակ հայերից մէկը ռևոլվերի 5 դնդակով տեղնուտեղը սպանում է ոստիկաններից մէկին, իսկ միւսը՝ ծանրապէս վիրաւորում է միւսին։

Մէկն առաջուան ձերբակալուածներից, մէկն էլ ոճրագործներից փախչում են, իսկ երկու հոգի, ինչպէս պատմում են, ձերբակալուած են։

Դերձակ Պօղոսը ոտքով դլխով ցընդել է, չկայ։

***

Երեկ (16 յունիս) արեւելեան երկաթուղիների բաժնետոմսը 155 ֆրանկից իջաւ 145 ֆր.-ի...

Պոլիս հասած թէ մանաւոր և թէ պաշտօնական լուրերին նայելով, Մակեդոնիայում ծանր անկարգութիւնները պատահել թէև մանրամասնութիւնները պակասում են մեզ, սակայն թիւրք կառավարութեան իրարանցումին նայելով, բաւական նշանաւոր ընդհարում պէտք է որ տեղի ունեցած լինի։

Բարձրաստիճան թիւրքերի չքնաւում այն համոզումն ունին, որ դէթ այս անդամ չպիտի կարողանայ Թիւրքիան խոյս տալ եւրոպական կոնֆերենցիայի դումարուելուց, որպէս խոյս տուեց հայկական խնդրում չատ յայտնի պատճառով։

Նոյն բարձրաստիճան թիւրքերը համոզուած են նոյնպէս թէ՝ եթէ մի այդպիսի կոնֆերենցիա դումարուի, ուրիչ բան չըպիտի անի, եթէ ոչ կարդալ Թիւրքիային ամենածանր դատավճիռներից մէկը։

***

Սուլթանի թիկնապահ Շաքիր փաշան, Պետերբուրգի օսմանեան նախկին դեսպանը, քննիչ է կարգուած ասիական Թիւրքիայի նահանգները քննելու համար։

Թրքա-հայերի աչքը լոյս...

Mars.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

«Standard» լրագիրը հաղորդում է, թէ մի քանի պետութիւններ մտադիր են խորհուրդ տալ Բ. Դրանը, որ նա Մակեդոնիայումն էլ մացնի նոյն ռեֆորմները, որոնց մատրութիւն կայ մացնելու Հայաստանում։ Սակայն նախ քան այդ, պետութիւնները պիտի խօսք առնեն Բուլղարիայի իշխան Ֆերդինանդից, որ նա անպայման հրաժարուի Ռումելիային մօտենալու մտադրութիւնից։

—

Ինչպէս Սոֆիայից, յունիսի 15-ին, հեռագրում են «Նով. Վր.»-ին, Մակեդոնիայի ապստամբները, որոնք կուռում էին Կրատովի մօտ, ճղել են թրքական զօրքերի չղթան և մտել են երկրի ներսը. վարդար գետի եզերքում կռուի բռնուելով, ապստամբներից սպանուել են երկու հոգի և մի հոգի էլ վիրաւորուել է. Թուրքերից սպանուել են մօտ երեսուն հոգի։ Սպանուել են նոյնպէս 18 հոգի բուլղարացի-սլաւեաններ, որոնց թրքական զօրքերն ստիպել էին, որ զենան իրենց առջևից ապստամբների դէմ։ Այդ բուլղար գիւղացիներին Թուրքերը վախենում են հրացան տալ և նրանց գինում են սրածայր փայտերով։ Ասում են, որ ապստամբութիւն կայ Մակեդոնիայի խորքերում։

—

«Daily News»-ը հաղորդում է, որ Վիկտորիա թագուհին, ընդունելով լորդ Ռոզբերիի հրաժարականը, ոչ մի ցաւ չի յայտնել։ Թագուհին ուրիշ կերպ վերաբերուեցաւ մարքիզ Սոլսբիւրիին, երբ սա 1892 թուին նոյնպէս հրաժարական տուեց։

—

Բուլղարական «Պրոգրես» լրագիրն ասում է, թէ, ի նկատի ունենալով այն դիրքը, որ բռնել են Ֆրանսիական դիպլոմատիքական շրջաններն ու մամուլը, Ֆրանսիան կ'օգնէ այն բանում, որ Ռուսիան հաշտուի Բուլղարիայի հետ։

—

Լոնդոնից «Նով.»-ին հեռագրում են. «Մակեդոնիայի մասնաժողովը չարունակում է դրամական նուիրատուութիւններ հաւաքել, հրացաններ է գնում և ղրկում է Մակեդոնիա։ Միքանի բուլղարացիներ հրացաններ են նուիրում մասնաժողովին։ Շատ խմբեր են կազմուում Մակեդոնիա գնալու համար։ Բ. Դուբը այդ գործողութիւններին առթիւ բողոք է ղրկել Սոֆիա։ Եւրոպական պետութիւնների հիւպատոսները պաշտպանում են այդ բողոքը։ Լուրեր են պատում, թէ Ստոիլովի մինիստրութիւնը հրաժարական պիտի տայ։ Կիսապաշտօնական «Պրոգրես» լրագիրը մակեդոնացիներին «ղերայրներ» է կոչում և յոյս ունի, որ Մակեդոնիայում ռեֆորմներ մացուին։ Մակեդոնիայի մասնաժողովի ներկայացուցիչներից մէկը «Köln. Zeit.»-ի թղթակցին ասել է, թէ բուլղարական հրպատակ չատ մակեդոնացիներ արտասահմանում թոյլտուութեան են սպասում Մակեդոնիա գնալու։ Բուլղարական կառավարութիւնն առայժմ արգելում է նրանց այդ բանը, բայց յետոյ, կարծում են, որ թոյլ կտայ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ.

—

ԼՈՆԴՈՆ, 21 յունիս—Այսօր «Թլթսուն» կոչուած կլուբում լորդ Ռոզբերին հետևեալը յայտարարեց. քաղաքական դրութեան հիմնական դիծը հանդիսանում է այն, որ սլաւեանադաւանները պիտի կարենան ունենալ ներկայացուցիչներ։ այսուհետև կռիւը պիտի մղուի երկու մեծ կուսակցութիւնների, այն է՝ պահպանողականների և ազատամիտների միջև. ազատամիտներն իրենց դլխաւոր նպատակը պիտի դնեն այժմ լորդերի ժողովի ռեֆորմները, սակայն, ընդամին անուշադիր չմնալով ազատամիտ կուսակցութեան ծրագրի միւս կէտերը։

ՎԻՆՆԱ.—«Neue Freie Presse»-ին Բելգրադից հաղորդում են, որ սերբական կառավարութիւնը առհմանապահ կոմիսար գնդապետ Բրանդովիչին և մի քանի ատաղ-սպաներ է ղրկել թրքական իշխանութեան հետ միասին միջոցներ ձեռք առնելու սահմանի վրայ։

ԲԵՐԼԻՆ. — «Neueste Nachrichten» լրագրի ասելով, բոլորովին հիմք չունի Բիսմարկի հիւանդութեան վերաբերեալ լուրերը։ «Hamburger Corresp.» Թերթին ուղղակի Ֆրիդրիխսրուհէից հաղորդում են, որ իշխ. Բիսմարկն առողջ է. որ նա անձրևի տակ կառքով զբօսել է երկու ժամ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 22 յունիս.—«Պրաւ. Վեստ.»-ում տպուած է. «Ուսաւորութեան մինիստրը ներքին գործերի մինիստրի հետ կայացրած համաձայնութեամբ ամենահպատակօրէն դեկուցմամբ ատացել է Բարձրագոյն հրաման գործադրելու համար հետևեալ միջոցները, 1) մինիստրների մասնաժողովի 1869 թուի օգոստոսի 9-ի Բարձրագոյն հաստատած կանոնադրութեան գօրութեամբ հիմնուող և ներքին գործերի մինիստրութեան իրաւասութեան տակ գտնուած մասնաւոր և հասարակական տեխնիկական-արհեստագիտական ուսումնարանները, որոնք գտնուում էին ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ, յանձնուած են լուս. մինիստր. իրաւասութեանը՝ ուսումնական մասի մէջ մի ուղղութիւն հաստատելու նպատակով։

Պետերբուրգ հասաւ բուլղարական մի պատգամաւորութիւն 8 հոգուց բաղկացած, որոնց գլուխ է անցած Կլիմենտ միտրապոլիտը։ Պատգամաւորութիւնն իւր հետ բերել է մի պատկ ի Տէր հանգուցեալ Կայսր Ալէքսանդր III-ի գերեզմանի վրայ դնելու համար։ Պատկը կըդնուի յունիսի 23-ին, Խաղասէր-Թագաւորի համար կատարուելիք հոգեհանգստի ժամանակ։ Կլիմենտ միտրապոլիտին իւր բնակարանում այցելեցին Պետերբուրգի «Սլաւեանական բարեգործական ընկ.» նախագահ վ. կ. Սաբլերը, յիշեալ ընկ. քարտուղարն ու պատուաւոր անդամ վ. կ. Արխանովն և ուրիշ մարդիկ։ Պատգամաւորութիւնը Պետերբուրգում կըմնայ մօտ 10 օր։

ԲԵՐԼԻՆ.—Վիլհելմ կայսրն այսօր առաւօտեան Քիլից մեկնում է Ստոկհոլմ։

ԲԵԼԳՐԱԴ, 22 յունիս (յուլ. 4-ին).—Զանազան դժուարութիւնների առաջանալու պատճառով, Խրիստիչի կաբինետը հրաժարական տուեց։ Թագաւորը այսօր երեկոյեան քազաքական զանազան գործիչներին պալատ հրաւիրեց։ Ենթադրում են, որ նոր մինիստրութեան կազմակերպութիւնը կըյանձնուի Վիենայի սերբական գեսպան Սիլիչին՝ չափաւոր - արմատականների աջակցութեամբ։ Թագաւորն իւր որոշումը կըյայտնի վաղը։

ՍՈՖԻԱ.—Բուլղարական կառավարութիւնը պիտից մեծ վեզիրին հարցնելով թէ արդեօք ճիշտ է, որ Ադրիանապոլսի զինուորական բանակի հրամանատարին հրամայուած է սահմանի մօտ որևէ կարդութիւն պատահած դէպքում զօրքը առաջ տանել դէպի բուլղարական հողերը։ Մեծ վեզիրը, հերքելով այդ լուրը, հաւատացրեց, որ օսմանեան կայսրութիւնը խաղաղասիրական դիտմունքներ է տածում Բուլղարիայի վերաբերմամբ։

ՊԵԿԻՆ («Ռէյտեր») Չինական կառավարութիւնը ընդունել է ռուս-չինական փոխադարձութեան առաջարկութիւնը։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դորու ուսուցչական սեմինարիան աւարտած մի երիտասարդ կամենում է Հայոց ուսումնարաններում **ԴԱՍԵՐ ԱՒԱՆ ԴԱԼ** ամեն առարկաներից (բացի Հայոց լեզուից), առանձնապէս ռուսաց լեզուից և Թուաբանութիւնից, որոնց քաջարի գիտութեան համար ստացել է սեմինարիայի վարչութիւնից գովասանական թերթ։ Հասցէն՝ Тифлисъ, Каравансарай Хосроева, Аршаку Теръ-Есаянъ.
(N) 3—1

„САЛЬВАТОРЪ“
пластырь истребляющій мозоли
В. БОРОВСКАГО владѣльца аптеки
въ Варшавѣ улица Переѣздъ № 643.
Получить можно во всѣхъ аптекахъ и аптечныхъ магазинахъ. Высылается почтою во всѣ мѣста Имперіи.
Цѣна коробки 35 коп.
(M.) 2—1

ԽՈՏԵՐԻ ԿԱՐԱՄԵԼ
Հաղէ պէհ
„ԿԵՏՏԻ ԲՈՍՍ“
Բ. ՍԵՄԱԴԵՆԻ ԿԻԵԻՈՒՄ
Գլխաւոր պահեստը լէքսանդր Վենցէլի մօտ, Պետերբուրգում, Բոպոխովայա, 33, Վաճառւում է Ռուսիայի բոլոր գեղատներում և գեղատ. խանութներում։
Գինն է տեղէն ուղղիւով 25 կոպէկ։
(M.) 20—15

ԴՆԵՑԷՐ ՄԻԱՑՆ
ԱՏԱՄԻ ՏԻՄՈԼԵԱՆ ԷԼԷՔՏԻՐ և ԱՏԱՄԻ ՏԻՄՈԼԵԱՆ ՓՈՇԻ
Լաստանաւ են ընդունք և պահպանաւ են պատիները
Ս. Պ. Բ. ՏԵԽՆՈ-ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Գլխաւոր պահեստները—С. ПЕТЕРБУРГЪ, Александр. площ. 9. МОСКВА, ВАРШАВА.
(M.) 7—1.

Հոյս տեսաւ
ԻՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎԻ
„ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ“
(Стихотворенія въ прозѣ)
Թարգմանեց ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ
Գինն է 50 կ. Հանապատճառով 60 կ.
Յանկացողները դիմում են Թիֆլիս կենդրոնական գրավաճառանոցին կամ Թարգմանչին՝ Москва, Новая Тасманная, домъ Шибаевой, контора М. А. Шоршорова, Александру Цатурянъ.
(666) 3—3

*) Սա բարեկարգ երկիրներում անկարելի մի բան է, և ոչ ոք չի համարձակուիլ բանտարկեալ տանող կինուրին նոյն իսկ մօտենալու, բայց Թիւրքիայի մէջ սա ընդունուած է և յաճախ ոստիկանները կաշառ առնելով ազատ են արձակում նոյն իսկ չատ ծանր յանցագործներին։

Тифлисъ Дозв. Цензурою 23-го Іюня 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ